

«ԿԱՄՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ

Վարկերի կենտրոնացված որոշումների կայացման
բաժնի ավագ մասնագետ /բիզնես վարկերի վերլուծաբան/

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

Լրիվ աշխատաժամանակ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Անորոշ ժամկետով

ՎԱՅՐԸ

ՀՀ, ք.Երևան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԿԱՄՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է Վարկերի կենտրոնացված որոշումների կայացման բաժնի ավագ մասնագետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են Ընկերության կողմից իրականացվող վարկավորման չափանիշների և պայմանների համապատասխանելիության հսկողության իրականացում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Ընկերության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված եզրակացությունների և առաջարկությունների ուսումնասիրում,
- ✓ Իրականացնում է Վարկերի կենտրոնացված որոշումների կայացման բաժին /այսուհետ՝ Բաժին/ ներկայացված վարկային հայտերի վերլուծություն (պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակի, վարկարժանության, վճարունակության և հուսալիության գնահատում, երաշխավորի, գրավի առարկայի ընդունելի լինելու գնահատման, փաստաթղթերի արժանահավատության և ամբողջականության վերաբերյալ) և որոշման ներկայացում՝ Անմիջական ղեկավարին: Անհրաժեշտության դեպքում իրականացնում է Բաժին ներկայացված պոտենցիալ վարկառուների վերաբերյալ տեղեկատվության լրացուցիչ ճշգրտում՝ հեռախոսազանգի, այցելությունների և այլ միջոցներով:
- ✓ Վարկային ռիսկերի նույնականացում/հայտնաբերում, հայտնաբերված վարկային ռիսկերի նվազեցման համար առաջարկությունների պատրաստում:
- ✓ Հաճախորդների վարկային ռիսկերի գնահատման հարցերով Ընկերության ստորաբաժանումների աշխատողների հետ փոխազդեցություն/համագործակցություն:
- ✓ Ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները աշխատողների և հաճախորդների կողմից խաբեությունների, կեղծ և/կամ շինծու գործարքների, ծառայողական դիրքի չարաշահման, շահերի բախման և այլ ապօրինի գործողությունների բացառման, կանխման և/կամ բացահայտման ուղղությամբ:
- ✓ Ապահովում է իր կողմից ուսումնասիրվող վարկային փաթեթների ամբողջականությունը և պահպանումը:
- ✓ Պարտականությունների կատարման ընթացքում ներքին իրավական ակտերի պահանջների պահպանում:
- ✓ Պարտականությունների կատարման ընթացքում վարկավորմանն առնչվող օրենսդրական, նորմատիվ ակտերի, ՀՀ ԿԲ կարգերի, կանոնակարգերի և հրահանգների, ՆԻԱ-ի և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանում:
- ✓ Իրականացնում է Բաժնի գործունեությանը վերաբերվող հարցերով գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի աշխատողներին խորհրդատվության տրամադրում /բացի զաղտնի տեղեկատվությունից/:
- ✓ Տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության գծով նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանում և կատարում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն /տնտեսագիտական և/կամ ֆինանսական/,
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում վարկավորման բնագավառում,
- Վարկառուների բիզնեսի ֆինանսական տնտեսագիտական վերլուծության սկզբունքների և մեթոդաբանության իմացություն,
- Վարկառուների վարկունակության վերլուծության իրականացման մեթոդների իմացություն,

- Ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվ ակտերի, ՀՀ ԿԲ կարգերի և հրահանգների իմացություն,
- Տնտեսվարող սուբյեկտների հարկման և հաշվապահական հաշվառման հիմունքների իմացություն:
- Ֆինանսական վերլուծության իմացություն,
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորման և բիզնեսի վարման իրավական բնագավառների իմացություն, գրավի ապահովմամբ գործառնությունների իրականացման և փաստաթղթերի ապահովման պահանջների իմացություն,
- Հայոց և ռուսաց լեզուների իմացություն, անգլերենը ցանկալի է,
- MS Office, AS Bank, Internet փորձառու օգտագործող,
- Excel VBA ծրագրավորման լեզվի տիրապետումը կոդիտարկվի որպես առավելություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Երևան 0033, Կալենցի փ. 11 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ Anahit.Manukyan@kamurj.am՝ **հստակ նշելով պաշտոնը**, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝
 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

13 հունվարի 2022
 27 հունվարի 2022